

մեծ մարմարէ նման Ստամպուլայ մօյտանին ,
 15 կանգնեցուցած ի վերայ չորս պղնձէ առիւծու
 զայն ահագին սիւնն եւ ի գլուխն օսկի խաչ :
 Եւ այլ յառաջ մերձ ի դուռն տաճարին կո-
 փած էր սպիտակ մարմարէ զարմանալի
 զՊետրոս եւ զՊօղոս , միոյն ձեռն բանալի ,
 20 միւսոյն սուր : Եւ մտեալ եկեղեցի՝ տեսաք ի
 դուռն ներս զսուրբն Պետրոս սպետրէ թա-
 փած եւ ներքեւն սնտուկ մի . եւ սահմանք էր
 որ մտնողքն նախ զոտն համբուրէին , ար-
 կանէին ի սնտուկն ողորմութիւն . եւ ապա
 25 մտեալ ի մատուռն : Ուր կայր պատվական
 սուրբ մարմինն Պետրոսի , զոր անկեալ ի վե-
 րայ երեսաց երկրպագեցաք սուրբ գերեզմա-
 նին եւ մեղաց թողութիւն խնդրեցաք եւ մեր
 ննջեցելոց , այլ եւ բարերարաց եւ երախտաւո-
 30 րաց : Ձուխտն կատարեցաք , մեր մուրատին
 հասաք . զուք այլ հասնիք ձեր մուրատին :

Եւ շրջեալ տեսաք զմեծութիւն եւ զլայ-
 նութիւն եւ գերկայնութիւն . զի էր երկայնու-
 թիւնն երեք հարիւր քայլափոփս եւ լայնութիւն
 35 երկու հարիւր յիսուն . իսկ զմպէթին բար-
 ձրութիւնն վեցհարիւր աստիճան . զի գեռ
 եւս զործէին արվեստաւորքն . եւ վարէն
 իբրեւ զճնճղուկ երեւէին : Եւ ի ճառագայթից
 օսկոյն եւ երանգոյն պայծառութենէն պլնուին
 40 աչք մարդկան : Եւ կային բազում մարմարէ
 սիւնք . ոմն սեւ , ոմն սպիտակ իբրեւ զձիւն ,